ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մառի անվան Լեզվի Ինստիտուտի աշխատությունների այս անդրանիկ ժողովածուն նվիրված է ակադեմիկոս Ն. Յակ. Մառին, որի անունն է կրում Ինստիտուտը: Ժողովածուի մեջ զետեղված են Ինստիտուտի առաջին գիտական սեսիայի զեկուցումները և մի քանի այլ աշխատություններ, որ գրել են սովետական լեզվաբանության՝ «Լեզվի նոր ուսմունքի», ներկայացուցիչներն ու հետևորդները: Ժողովածուն նպատակ ունի հայ հասարակությանը ներկայացնելու «Լեզվի նոր ուսմունքի» մի քանի հիմնական դրույթները՝ կապված ընդհանուր լեզվաբանության և հոր հայագիտության պրոբլեմների հետ: Ժողովածուի հրատարակությունը ցույց է տալիս, թե ի՞նչ խնդիրներ են զբաղեցնում Մառի անվան Լեզվի Ինստիտուտին և թե ի՞նչ ուղղությամբ են ընթանում նրա հետազոտական աշխատանքները լեզվի տեսության և հայերեն լեզվի տեսության ու պատմության բնագավառում:

Ժողովածուն հանդես չի գալիս մեծ հավակնություններով և որպես առաջին փորձ կարող է բավարարել մեր հասարակայնության միայն խիստ համեստ պահանջները:

ՄԱՌԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ